ՀԱՅՐ ՍԵՐՈԲ ՉԱՄՈՒՐԼՅԱՆ
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՎԵՆԵՏԻԿ

Խոր վշտով գալիս ենք մեր սրտազգաց ցավակցությունները բերելու Մխիթարյան Միաբանությանը՝ Միաբանության Ընդհանուր Արբահայր և Առաջնորդ Հ. Սահակ Վարդապետ Ճեմճեմյանի կարճատև և անողոք հիվանդության պատճառով անսպասելի մահվան առթիվ:

Թող Բարին Աստված հանգուցյալ Իր ծառայի արդար հոգին սիրով ընդունի երկնքի արքայության լուսեղեն հարկերի մեջ և անսպառ մխիթարություն և ուժ պարգևի Մխիթարյան Միաբանության ողջ անդամներին:

Հ. Սահակ վարդապետ Ճեմճեմյան իր նվիրյալ և մաքուր կյանքով և իր գրական բեղուն աշխատանքով, իբրև պայծառ մի աստղ հայ ժողովրդի հոգևոր և գրական կյանքի երկնակամարում, պիտի մնա առհավետ:

Սույն թվականի հոկտեմբերի 20-ին, կիրակի օրը, հետ սուրբ և անմահ Պատարագի արարողության, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում հոգեհանգստյան հատուկ պաշտոն պիտի կատարվի մեր նախագահությամբ հանգուցյալ Արբահոր հոգվո խաղաղության համար:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի: Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
11 հոկտեմբեր 1996 թ.